USAID FROM THE AMERICAN PEOPLE

BUJAN

COUNTERPART INTERNATIONAL

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2012թ.



«ԿԱՆԱՉ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

Այս համարում

- Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները - էջ 2
- Կանաչ կառավարման մեկնարկը - էջ 2
- Մարզային փորձագետների վերապատրաստում - էջ 3
- ՏԻՄ պարտավորությունները շրջակա միջավայրի կառավարման առումով - էջ 4
- Պատմաաշխարհագրական կարճ ակնարկ ծրագրում ընդգրկված համայնքների մասին- էջ 5

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ Սահմանադրության և օրենքների համաձայն Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիներն ունեն տեղեկացված լինելու ու համայնքի զարգացմանը մասնակցելու իրավունքներ: Սակայն իրականում երկրի տնտեսական, հասարակական, քաղաքական կյանքին հասարակության մասնակցությունը դեռևս չնչին է: Հատկապես մարզերում հասարակությունը պատշաճ տեղեկացված չէ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունից և պարտավորություններից բնապահպանության և շրջակա միջավայրի կառավարման ոլորտում:

Տեղական ինքնակառավարման մարմինները իրենց քառամյա ծրագրերը կազմելիս, որոշում կայացնելիս սովորաբար որպես առաջնահերթություն ընդունում են միայն սոցիալական և տնտեսական զարգացման խնդիրները: Համայնքային զարգացման ծրագրերում բնապահպանական խնդիրների թերներկայաց-վածությունը առաջացնում է վերաբերյալ որոշումների կայացման գործում հասարակության մասնակցության ցածր մակարդակ, կամ ընդհանրապես բացակայություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼՈՒԽ 2

Հոդված 33.2. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը եւ բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ եւ այլոց հետ համատեղ պահպանել եւ բարելավել շրջակա միջավայրը:

Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:

Քաղաքացիական հասարակության կառույցները բնապահպանության ոլորտում ակտիվ գործունեություն են ծավալում միայն խոշոր քաղաքներում, փոքր համայնքներում բնապահպանական հասարակական շարժումները նոր-նոր են ձևավորվում:
Անիրազեկ լինելու արդյունքում էլ նկատվում է քաղաքացիական պասիվություն:
Վերոնշյալ խնդիրներն են պատճառ դարձել, որպեսզի «Բլեջան» Հասարակական կազմակերպությունն Օրհուս կենտրոնների հետ համատեղ նախաձեռնի Կանաչ կառավարման գործընթաց:

Կանաչ կառավարման մեկնարկը

Քաունթերփարթ Ինտերնեշնլի Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի շրջանակներում «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ հոկտեմբերի 1-ին մեկնարկեց «Կանաչ կառավարում» ծրագիրը:
Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագիրն իրականացվում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) աջակցությամբ:
Ունի 2 բաղադրիչ.

- ✓ ՏԻՄ և քաղաքացիական հասարակության համագործակցություն, որի նպատակը մասնակցային ռազմավարական պլանավորումը խթանելն է,
- ✓ Աջակցություն քաղաքացիական մասնակցությանը, շահերի պաշտպանությանը և քաղաքացիական ակտիվությանը:

«Կանաչ կառավարում» ծրագրի ռազմավարական նպատակը Հայաստանում Օրհուսի կոնվենցիայի իրականացմանը, համայնքային մակարդակում հասարակության տեղեկացվածության, համագործակցային, մասնակցային գործընթացների մեխանիզմների ձևավորմանը նպաստելն է՝ առավել թափանցիկ դարձնելով կառավարումը շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: Առաջին փուլի համար ընտրվել են 7 մարզեր՝ Լոռին, Տավուշը, Շիրակը, Գեղարքունիքը, Կոտայքը, Վայոց Ձորն ու Սյունիքը: Ծրագրի մարզային փորձագետները ջանալու են տեղերում բարձրացնել ՏԻՄ-երի և քաղաքացիական հասարակության կառույցների գործունեության թափանցիկությունը շրջակա միջավայրի պահպանության ոլորտում, նպաստել որակական դրական համագործակցության ձևավորմանն ու կառավարման բարելավմանը:

Ակնկալվում է, որ ծրագրի արդյունքում շրջակա միջավայրի պահպանության ու կառավարման ոլորտում հասարակությունը (առնվազն 1200 քաղաքացի) իրազեկ կլինի պետական կառույցների, ՏԻՄ-երի, և քաղաքացիական հասարակության կառույցների գործունեության վերաբերյալ, կզարգանան համայնքների ավագանիների և բնակիչների բնապահպանական ինստիտուցիոնալ կարողությունները ու բնապահպանական գիտելիքները:

Մարզերում կստեղծվեն ու կընդլայնվեն արդեն գոյություն ունեցող բնապահպանական տեղեկատվական ցանցերը և, ինչպես դրանց, այնպես էլ Հայաստանի Օրհուս կենտրոնների Վեբ-կայքում ստեղծված քաղաքացիական իրազեկության էջի միջոցով ծրագրով ձեռքբերված տեղեկատվությունն առավել լայն տարածում կստանա:

Մարզային փորձագետների վերապատրաստում

Հոկտեմբերի 18-ին Երևանի Օրհուս կենտրոնում տեղի ունեցավ սեմինար «Կանաչ կառավարում» ծրագրի մարզային փորձագետների համար:

Նպատակն էր վերապատրաստել մարզային փորձագետներին, որպեսզի նրանք կարողանան տեղերում նպատակաուղղված աշխատանք տանել ՏԻՄ-երի, բնապահպանության ոլորտի պետական մարմինների ու հասարակական կառույցների միջև տեղեկատվության տարածման ու հաշվետվողականության ձևավորման ուղղությամբ՝ ի նպաստ շրջակա միջավայրի կառավարման բարելավման:

Ծրագրի աշխատանքային խմբից ու մարզային փորձագետներից բացի, սեմինարին ներկա էին նաև ծրագրի վերահսկողության խորհրդի անդամ, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության ՏԻՄ-երի վարչության պետ Ա. Գիլոյանը, Բնապահպանության նախարարության Տեղեկատվական-վերլուծական կենտրոնի աշխատակիցը, Հայաստանի Օրհուս կենտրոնների իրավախորհրդատու Ա. Գրիգորյանը:

Սեմինարին բացման խոսքով հանդես եկավ ծրագրի ղեկավար Լ. Ասոյանը: Նա նշեց, որ ՀՀ Սահմանադրության և օրենքների համաձայն քաղաքացիներն ունեն տեղեկացված լինելու ու համայնքի զարգացմանը մասնակցելու իրավունքներ: Սակայն նրանց իրական մասնակցությունը երկրի տնտեսական, հասարակական, քաղաքական կյանքում դեռևս նշանակալի չէ, քանի որ մարդիկ բավարար չափով իրազեկված չեն: Հենց դրանով էլ նա պայմանավորեց նրանց քաղաքացիական պասիվությունը: «Հասարակությունը շատ քիչ է տեղեկացված պետական կառույցների և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունից և պարտավորություններից բնապահպանության, շրջակա միջավայրի կառավարման ոլորտում: Պետական կառույցները և տեղական ինքնակառավարման մարմինները որոշում կայացնելիս որպես

առաջնահերթություն ընդունում են միայն սոցիալական և տնտեսական զարգացման խնդիրները, իսկ բնապահպանությունը սովորաբար ստորադասվում է վերջիններիս»,- նշեց Լ. Ասոյանը՝ ավելացնելով, որ պետական կառույցների և ՏԻՄ-երի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կառույցների գործունեության վերաբերյալ փոխադարձ անտեղյակությունը հանգեցնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ոչ արդյունավետ կառավարման և բազմաթիվ վիճելի հարցերի առաջացման:

ՀՀ Տարածքային կառավարման նախարարության ՏԻՄ-երի վարչության պետ Ա. Գիլոյանը ողջունեց ծրագրի գաղափարը: Նրա կարծիքով առաջին հարթին պետք է ակտիվացնել քաղաքացիներին, քանի որ փորձը ցույց է տալիս, որ քաղաքացիները չեն շտապում օգտվել իրենց ընձեռնված հնարավորություններից, օրինակ՝ քաղաքացիական սպասարկման գրասենյակների ծառայություններից: Այս առումով նա հատկապես կարևորեց Օրհուս կենտրոնների դերը, քանի որ հասարակությանն ակտիվացնելու գործում այստեղ արդյունքները նկատելի են: Նրա կարծիքով այս ծրագիրը կարող է բարելավել շրջակա միջավայրի պահպանության և հասարակությանը հաշվետու լինելու հարցերում ՏԻՄ-երի գործունեությունը:

Ծրագրի մարզային փորձագետ Գ. Պետրոսյանն էլ կարևորեց աշխատանքը հենց այն համայնքներում, որոնք ավելի փակ են ու որոնց հետ աշխատելն առավել դժվար է: Նա նշեց, որ քաղաքացիական հասարկության կառույցները բնապահպանության ոլորտում ակտիվ գործունեություն են ծավալում միայն խոշոր քաղաքներում, այն էլ ակնհայտ խախտումների դեպքում և, սովորաբար, այդ գործունեությունը վերածվում է հակամարտության: Գ. Պետրոսյանը ներկայացրեց դրական համագործակցության իր փորձը, մասնավորապես՝ ԲՆ Բնապահպանական պետական տեսչության տարածքային բաժնի հետ, որի շնորհիվ հնարավոր է եղել կանխել ծառահատումների ու ապօրինի գործունեության բազմաթիվ դեպքեր:

Վեբ-դիզայներ Ն. Մանդալյանը սեմինարի մասնակիցներին ներկայացրեց «Քաղաքացիական հասարակություն» ինտերնետային էջի նախնական տարբերակը, համատեղ քննարկվեցին տեղեկատվության ներկայացման անհրաժեշտ բաժինները:

Մարզային փորձագետները սիրով համաձայնեցին անել հնարավորը ծրագրի նախանշված նպատակներին հասնելու համար:

ՏԻՄ պարտավորությունները շրջակա միջավայրի կառավարման առումով

ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին հին օրենով (Հոդված 38. Համայնքի ղեկավարի գործունեությունը բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում) համայնքի ղեկավարը Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում ուներ միայն պատվիրակված լիազորություններ, որոնք սակայն չէին արտացոլում ոլորտի կարգավորման ժամանակակից պահանջները: Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ նոր օրենքով (07.05.2002թ.) համայնքի ղեկավարի իրավասությունները: Նրան տրվեցին ոչ միայն պատվիրակված, այլև պարտադիր լիաղորություններ (Հոդված 45. Համայնքի ղեկավարի գործունեությունը բնության եւ շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում): Շրջակա միջավայրի պահպանության ու բարեկարգման հարցերին քիչ թե շատ վերաբերում է նաև նոր օրենքի 38-րդ հոդվածը, որը սահմանում է համայնքի ղեկավարի գործունեությունը կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում: Սակայն այստեղ ևս անկատարություն կա, քանի որ համայնքի ղեկավարը հանդես է գալիս և՛ պահպանողի՝ կազմակերպելով համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությունը, և՛ վերահսկողի դերում՝ վերահսկողություն իրականացնելով բնության պահպանության բնագավառում, կազմակերպելով ընդերքի, անտառային, ջրային և օդային տարածքների, ինչպես նաև բուսական ու կենդանական աշխարհի օգտագործման և պահպանման միջոցառումները:

Պատմաաշխարհագրական կարճ ակնարկ
ծրագրում ընդգրկված համայնքների մասին



Ալավերդի քաղաքը գտնվում է Լոռու մարզում՝ Դեբեդ գետի նեղ կիրճի զառիթափ լանջերին և Սանահինի սարահարթում: Ռելիֆին բնորոշ են տարբեր մակարդակի բարդությունները՝ 750- 1400 մ և ընդգծված թեքությունները: Ալավերդին և շրջակայքը բնակեցված են եղել վաղուց, հայտնաբերված հնագիտական ապացույցները պատկանում են պատմական բոլոր դարաշրջաններին: Արդյունաբերական Ալավերդին հարուստ է նաև պատմական հուշարձաններով, շատ հայտնի է Սանահինի վանքը և կամուրջը:

Գյումրին Շիրակի մարզկենտրոնն է: Բնակչության թվաքանակով ՀՀ երկրորդ քաղաքն է, առկա բնակչության թվաքանակը 146 հազար է: Գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմտյան մասում՝ Երևանից 126 կմ հեռավորության վրա: Գտնվում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտում: Վերջին ուժեղ երկրաշարժը տեղի է ունեցել 1988-ի դեկտեմբերի 7-ին: Բնակչության մեծ մասը հայեր են: Ապրում են նաև ռուսներ, հույներ և եզդիներ:
Գյումրին բնակավայր է եղել դեռ անհիշելի ժամանակներից: Այդ մասին են վկայում դեռևս 1875-ին, շինարարական աշխատանքների ընթացքում, այսպես կոչված, «Մարտիկի գերեզմանից» գտնված մ.թ.ա. II հազարամյակի բրոնզե իրերը, ինչպես նաև 1908-ին գտնված մ.թ.ա. X-IX դդ. երկաթե ապարանջաններն ու դանակները, 1929-ին պատահաբար գտնված կավե և բրոնզե իրերը, 1939-ին հանագույն բնակատեղիից պեղված ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի աշաատանքային գործիքներն ու զենքերը:

Դիլիջանը քաղաք է Տավուշի մարզում: 2001թ. Մարդահամարի տվյալներով բնակչության թիվը 16202 է: Երևանից հեռավորությունը՝ 96 կմ: Առողջարանային քաղաք է:

Գտնվում է ՀՀ հյուսիս-արևելյան մասում՝ Աղստև գետի հովտում: Շրջապատված է Բազումի, Փամբակի և Արեգունի լեռներով: Կիրճի լեռնային զանգվածները ծածկված են հարուստ անտառներով, որոնք քաղաքի բնական արժեքավոր հարստությունն են և զբաղեցնում են 34000 հա տարածք: Անտառի բուսական և կենդանական աշխարհի պահպանման, հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով 1958թ, կազմակերպվել է պետական արգելոց,

որի բազայի վրա 2002թ. Ստեղծվե է «Դիլիջան» ԱՊ-ն:
Քաղաքի հս մասում՝ 1400մ բարձրության վրա, գտնվում է Պարզ լիճը: Քաղաքի միջով է հոսում Աղստև գետն իր վտակներով:

Հրազդանը Կոտայքի մարզկենտրոնն է: Բնակչության թվաքանակը 59364 մարդ: Տեղակայված է Հայաստանի հյուսիս-արևելյան մասում: Հյուսիսից եզերված է Փամբակի լեռնաշղթայով, հարավ-արևմուտքից՝ Ծաղկունյաց լեռնաշղթայով: Արևելքից սահմանն անցնում է Գեղամա լեռնաշղթայով՝ մինչև Գութանասարի գագաթը: Քաղաքի տարածքով հոսում է Հրազդան գետը, որի մեջ թափվում են Մարմառիկ և Աղվերան գետակները:

է հանդիսանում: 1959 թ. Ախտա գյուղը (ներկայիս Հրազդան քաղաքի հարավային թաղամաս) դասվեց հանրապետության քաղաքատիպ ավանների շարքին և նույն թվականին վերանվանվեց Հրազդան քաղաքատիպ ավան: 1963 թ. էլ «Հայկական ՍՍՌ-ում վարչատարածքային փոփոխությունների մասին» հրամանագրով լուծարվեցին աշխատավորների, դեպուտատների, Աթարբեկյանի և Ջրառատի գյուղական սովետները և Աթարբեկյան (այժմ՝ Վանատուր), Ջրառատ, Կաքավաձոր, Մաքրավան գյուղերը մտան Հրազդան քաղաքի կազմի մեջ: Ձեռք բերելով քաղաքի կարգավիճակ այն աստիճանաբար կերպարանափոխվում էր: Գերծանրաբեռնվածէ արդյունաբերական ձեռնարկություններով:

Գավառը քաղաքային համայնք է Գեղարքունիքի մարզում: 1995թ. վարչատարածքային նոր բաժանումից հետո ունի մարզկենտրոնի կարգավիճակ: Գավառ քաղաքում հաշվառված է 25830 բնակիչ:
Նախկինում մտել է Երևանի նահանգի Նոր Բայազետ գավառի մեջ: Հնում ունեցել է Բայազեդ Նոր, Բայայեզեթ Նոր, Գավառ, Նոր Բայազետ, Նոր Պայազիտ, Քյավառ, Կամո անվանումները: Քաղաքի կարգավիճակ ունի 1850թ.-ից:
Նախկինում բնակավայրի Գավառ անվանումը տեղա-



ցիների կողմից աղավաղվելով դարձել է Քյավառ: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին Նոր Բայազետը եղել է բավական աշխույժ առևտրի կենտրոն, այստեղ պարբերաբար կազմակերպվել են կիրակնօրյա շուկաներ, որտեղ վաճառվել են խոշոր և մանր եղջերավոր անասուններ, գյուղատնտեսական մթերքներ, ինչպես նաև իշխան ձուկ, որի որսի մենաշնորհը պատկանում էր բայազետցիներին: Նոր Բայազետում գործել են 10-ից ավելի արհեստներ:
Գավառը տեղադրված է Սևանա լճի ափից 7-8 կմ հեռավորության վրա՝ Գավառագետի ընդարձակ հարթավայրում: Շրջակայքում Գավառագետն առաջացրել է ճահիճներ:

Եղեգնաձորը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելյան մասում, Վայոց Ձորի մարզկենտրոնն է:



Այդ մասին են վկայում քաղաքի հյուսիս-արևելյան հատվածում պեղված դամբարաշերտի գտածոները: Դրանք պատկանում են մ.թ.ա. I հազարամյակին: Քաղաքը տարածվում է Արփա գետի Սրկողք վտակի աջ և ձախ ափերին, հյուսիսում ձուլվում է Գլաձոր և Վերնաշեն գյուղերի հետ: Եղեգնաձորով է անցնում Սյունիքի մարզը և Արցախի Հանրապետությունը Երևանի հետ կապող մայրուղին: Հեռավորությունը Երևանից 119 կմ է:

Համայնքի տարածքում հանքային հանածոներից կան շինարարական քար (ֆելզիտ, գրանիտ), ապակու հումք, գրավյա:
Համայնքի բնակչությունը 2001թ. մարդահամարի տվյալներով 8187 մարդ է, քաղաքապետարանի տվյալներով մշտական բնակչությունը 2009թ. հունվարի 1-ի տվյալներով 9394 մարդ է:
Եղեգնաձորը մինչև 90-ական թվականները եղել է խոշոր արդյունաբերական կենտրոն:

Գորիսը քաղաք է Սյունիքի մարզում:
Մարզկենտրոնից հեռու է մոտ 70 կմ, Երևանից՝ մոտ 240 կմ: Գտնվում է Վարարակ գետի (Որոտանի վտակ) ափին:
Գորիսը քաղաքի կոչում ստացավ 1885 թ. Ռուսական Կայսրության կողմից: Քաղաքը ունի 20.000 բնակչություն (2001 թ.): Գտնվում է ստրատեգիական կարևորագույն՝ Երևան ՎՆ Ստեփանակերտ ճանապարհի վրա:



Քաղաքի արևելյան մասում է գտնվում Հին Գորիսը կամ Գորիս Գյուղը, որը իրենից ներկայացնում է քարանձավային բնակարանների մի ամբողջ շարք:
Գորիսն ունի մոտ 25000 բնակչություն: Բարձրաբերձ ժայռերը, բրգաձև գագաթները, խոր ձորերն ու կիրճերը, քարայրներն ու քարանձավները յուրօրինակ տեսք են տալիս Գորիսի ռելիեֆին: Բնությունը գեղեցիկ է, օդը՝ մաքուր:
Այս քաղաքներից յուրաքանչյուրը գեղեցիկ ու հետաքրքիր է յուրովի, ունի միայն իրեն հատուկ էկոլոգիական խնդիրներ, սրանց բոլորին միավորում է Կանաչ կառավարում ստեղծելու գաղափարը:

«Կանաչ կառավարում» ծրագրի շրջանակներում www.aarhus.am կայքում գործում է «Քաղաքացիական հասարակություն» էջը, որտեղ կարող եք գտնել Ձեր էկոլոգիական իրավունքներին, Շրջակա միջավայրի կառավարման ոլորտում պետական, տեղական ինքնակառավարման մարմինների ու քաղաքացիական հասարակական կազմակերպությունների պարտավորություններին ու փոխհարաբերություններին վերաբերող հարցերի պատասխանները

http://www.aarhus.am/index.php?option=com_content&view=article&id=1191&Itemid=591&lang=am

Կառավարում է նա, ով տիրապետում է տեղեկատվությանը:

Հարցերի կամ առաջարկությունների համար դիմել՝
հեռ: +374 264 6 15 11
ֆաքս: +374 264 2 34 29
բջջ: +374 77 76 46 41, +374 93 99 12 12